



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտերծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

497
27





478-493

492

478

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՕՑ. ԽՈՐ. ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏ
ԻՆՖՕՐՄԱՍԻՈՆ ԲԱԺԻՆ

Բ Ի Ի Լ Լ Ե Տ Ե Ն 2.

Ե ր ե ւ ա ն—5 Յուլիս.

1.

Մեր տնտեսական արտաքին քաղաքականութիւնը

Հայաստանի կոմունիստական կուսակցութեան երկրում վարած տնտեսական քաղաքականութիւնը, քաղաքացիներու և գիւղացիութեան ամենալայն խաւերում առաջ բերած է հոգեբանական թեքում, ի նըպաստ Խորհրդային իշխանութեան: Կոմունիստական կուսակցութեան այս աջողութիւնը անհրաժեշտ ազդակներէն մին էր, կոմունիստների ամրապնդման և լայնօրէն ժողովրդականացման, որին ազանատես ենք լինում օրէց օր:

1). Առաջինը այս քաղաքականութեան արդիւնքին, Կովկասեան երեք հանրապետութիւնների համաձայնութեամբ Անդրկովկասի երկաթուղուցանցի միացումն էր մինչև Պետրովսկ, որը այժմ ի կարար հանւած իրողութիւն մըն է: Այս կարգադրութեամբ ոչ միան մեր երկրի քանդւած երկաթուղագծերը կը կանոնաւորին և Անդրկովկասում կը ըստեղծի հաղորդակցութեան կանոնաւոր ապարատ, այլ կը սրբազրէի այն մեծ անկարգութիւնը, որ Անդրկովկասը երեք հանրապետութիւնների բաժանելէ վերջ առաջ եկաւ, լինելով անհամապատասխան բաշխում, աւելի ճիշտը կողոպուտ Անդրկովկասի երկաթուղագծի հարստութեան: Վրաստանը իրեն սեփականացուցած էր լաւագոյն և խոշորագոյն պատարը, իրեն պատկանեցնելով վագոնների և շոգեմեքենաների մեծագոյն մասի հետ նաև Թիֆլիսի մեծ երկաթուղային արհեստանոցը, որ վերաբերում էր համայն Կովկասեան երկաթուղագծին: Ազրբեջանը նւազ չէր մնացած, իսկ Հայաստանը ժառանգած էր շատ չնչին մասը, ընդհանուր բաժնից:

Այժմ ձեռնարկած է Ալէքսանդրապօլ — Երևան գծի վերանորոգութեան, որ դաշնակցականների և թուրքերու իշխանութեան ժամանակ փչացել էր, նոյնպէս վերաբացում է Ալէքսանդրապօլի Երկաթուղային արհեստանոցը, մի բան որ չէր կարելի անել մեր սեփական միջոցներով: Հաստատուած է կանոնաւոր երթևեկ Երևան — Թիֆլիս — Բագու և Երևան — Ջուլֆա — Թաւրիզ գծի վրայ:

2). Տնտեսութեան բարելաւման գործում, երկրորդ կարեւոր ազդակը եղաւ տնտեսական սահմաններու վերացումը Կովկասեան հանրապետութիւնների և Ռուսաստանի միջև: Ենթոյն Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան կենտրոնական Կոմիտէի ձեռք առած ազդու միջոցներին, մայիս 13-ին կայացած համաձայնութեամբ Ազըրբէյջանի, Վրաստանի և Հայաստանի սահմանների միջև զտնւոյ մարտատները և պարենաբազիլ խմբերը վերացւած են: Տնտեսական սահմաններու վերացումը, երկաթուղագծի միացման հետ պիտի ըլլային այն երկու անհրաժեշտ ֆակտորները, որոնք Անդրկովկասի տնտեսական բարդ կեանքի մէջ պիտի հաստատեն տնտեսական կանոնաւոր ապարատ: Այս երկու ակտերը՝ Անդրկովկասեան երկրներում ընդհանրապէս և Հայաստանում մասնաւորապէս, կեանք ու կենդանութիւն ներշնչեցին և առաջացուցին ներդաշնակութիւն՝ երեք երկիրների տնտեսական կեանքի մէջ, որոնք որեիցէ երկիրէ աւելի անքակտելի կապերով միացած են: 7 միլիոն առաջ մինչևիկ Վրաստանը, իր բացառիկ ծովեզերեայ դիրքով, իրեն կը վերապահէր այն բոլոր իրաւացի կամ անիրաւ առաւելութիւնները, որ կուտար իրեն ծովը, իսկ Մուսավատ Ազըրբէյջանը Բագուի նաֆթահորերը իրեն կը սեփականացնէր ամբողջապէս, զլանալով նաֆթ հայթայթել Վրաստանին և մասնաւոր Հայաստանին: Հայաստան խորթ դաւան էր այս ամենքին մէջ: Վերջ տրւելով տնտեսական սահմաններէ, ոչ միայն այս անիրաւոր ձեռքի անարդարութիւնները կը բարձին, այլ երեք երկիրներու աշխատաւոր դասակարգին — բանւորներուն և գիւղացիութեան կը արւի ամենամեծ առաւելութիւն իրենց տնտեսութեան մշակման մէջ, առանց սահմանային սահմանափակումների և ճնշումներու ենթարկուելու:

Հաստատուած է բաշխման կանոնաւոր ապարատ Բագուի նաֆտահորերի արդիւնաբերութեան, Վրաստանի հանքային արտադրութեան և այլնի համար Թորհրդային հանրապետութիւնների միջև: Անդրկովկասեան տնտեսական մի ապարատի գոյութիւնը, ոչ միայն անհրաժեշտ էր այլ և անխուսափելի, Անդրկովկասի բազմազան հարստութիւնների, երկրի բնական առաւելութիւնների, ինչպէս ջրաբաշխական, հանքային, անտառային և այլն բերումով: Այս որոշումներն օգտւողը պիտի լինի առաւելապէս Հայաստանի աշխատաւորութիւնը

3). Երբորդ աշխատանքը, որ կատարեցաւ այս ուղղութեամբ—
ատիկա երեք հանրապետութիւններու արտաքին յարաբերութիւնների
միացումն էր:

Որպէսզի բոլոր արտաքին շուկաներում նպատակայարմար
կազմակերպութիւնները փոխանակուեմը և սէպիզացիայի հնթարկ-
ւին արտահանութեան բոլոր աղբիւրները, Վրաստանի, Ադրբէջանի և
Հայաստանի սոցիալիստական հանրապետութիւնները հաստատեցին
արտաքին առևտրի համար միաւորուած մի մարմին, որ կոչուած է «Վր-
րաստանի, Ադրբէջանի և Հայաստանի միութիւն՝ արտաքին առևտրի
համար», Միութեան կենտրոնն է Թիֆլիսը:

Միութեան բոլոր գործերը ղեկավարելու և կառավարելու հա-
մար, պայմանաւորուող հանրապետութիւնների յատուկ որոշումով՝ ըն-
տրուում է միասնական վարչութիւն:

Պայմանաւորուող հանրապետութիւնների միջև բոլոր փոխ-
րաբերութիւնները արտաքին առևտրի հարցերի վերաբերեալ, որոնք
են արտահանութիւն, ներմուծում, վալիւտային ֆոնդ և այլն, պիտի
որոշին յատուկ պայմանագրերով:

Պայմանագիրը ստորագրուած է 2 յունիսին 1921 թ. Բագւայ մէջ
Վրաստանի, Ադրբէջանի և Հայաստանի կառավարութեանց նախա-
գահների կողմից:

Այժմ մշակուած է Թիֆլիսում սոյն պայմանագրի մանրամասնու-
թիւնները, երեք հանրապետութիւնների ներկայացուցիչների կողմից՝
Սորհրդային Հայաստանի կողմից լիազօր է Պարենաւորման և Արտա-
քին Առևտրի Կոմիտար՝ Ալէքսանդր Բէգզադեանը: Ընդունուած է յա-
տուկ բաշխման գրութիւնը բոլոր ներմուծուած ապրանքների համար,
բաժանուած երեք հանրապետութիւնների միջև:

2.

Մեր տնտեսական ներքին քաղաքականութիւնը.

Հայաստանի Կոմունիստական Կուսակցութիւնը կրկին ձեռք առ-
նիլով իշխանութեան ղեկը ապրիլ երկուսից անմիջապէս յետոյ, մեր
տնտեսական քայքայուած դրութեան բարեկաւումը յայտարարեց հեր-
թական և հարւածային ինդիւսթրիալ բոլոր մեծ ու փոքր ոյժերը, կու-
սակցութեան և կառավարութեան բովանդակ աշխատանքը՝ նւիրեցան
տնտեսական քանդում գրութեան շինարարութեան, որ տարեցաւ և
տարուած է մեծ եռանդով և մեծ յամառութեամբ ամենադժւարին պայ-
մաններում, որի բարեքնները սկսաւ հետզհետէ արդէն վայելել, երկրի

կիսաքաղց, տնտեսական կատարեալ քայքայման եղբը հասած աշխատաւորութիւնը:

Ներքին տնտեսական շինարարութեան գործում, առաջին աշխատանքները նւիրւեցան գարնանացանքսի հրատապ խնդրին. որ վերջացաւ յուսացւած աջողութեամբ: Կառավարութիւնը՝ տեղեկ ինչ որ կարելի էր երբեիցէ տալ: Գիւղացիք՝ օրինակած կառավարութեան ընդառաջումից արին ինչ որ կարելի էր անել: Կազմեցաւ գիւղերում և քաղաքներում սերմանման կոմիտէներ, աղքատ և չքաւոր գիւղացիներին սերմացու տալու նպատակով, նոյնպէս կոմունայի սխտեմով ցանքսեր և մեղաբուծական փորձեր եզան երբեմն գիւղերում:

Այժմ տնտեսական ճգնաժամը, շնորհիւ այս ուղղութեամբ թափւած գերազանց ճիգերին, կորսնցուցած է եր սուր բնոյթը և թէ ամեն բան կը խոստանայ, որ տնտեսական նոր կրիզիս մը չպիտի անցնէ երկիրը:

Յունիսի 3-ին, վերջնականօրէն ընդունւած երկու մեծ և վճռական քայլերից յետոյ, Կոմունիստական կուսակցութեան վարած քերքին տնտեսական քաղաքականութիւնը, զնում է երկրի պայմաններուն ամբողջապէս համապատասխան և նոյնքան հաստատ հիմունքներու վրայ, որպիսին է արտաքին տնտեսական քաղաքականութեան մէջ հետապնդւած վարքագիծը:

Առաջինը՝ այդ քաղաքականութեան, Պարենային տուրքի սխտեմին որդիագրումն է, համապատասխան օրինագծով, իսկ երկրորդը՝ կօօպերացիաներու լայնօրէն դարկ տալու առաջադրութիւնը ու բոլոր կօօպերացիաներու մի միութեան «Հայկօպի» մէջ կենտրոնացնելու որոշումը:

Պարենային տուրքի գործադրութիւնը, մեր տնտեսական քաղաքականութեան հիմնակէտը կը կազմէ: Պարենային տուրքի ժողովրդական սխտեմը, ընդունուում է առաջին անգամ Անդրկովկասում, Սորհրդային Հայաստանի կողմից, որով ամեն մի քաղաքացի որ պարսպում է հացահատիկի, գետնախնձորի, տխնիքական և արդիւնարեբական բոյսերի, վարսցանքսով ինչպէս և մեղաբուծութեամբ, անասնապահութեամբ և կենդանաբուծութեամբ վրաբեռնուող, պարտաւոր են սխտեմի վճարել բնական տուրք: Պարենային տուրքի չափերը սահմանուում են հւաղագոյն առումով, գիւղական տնտեսութիւնը խրախուսելու և իմպերիալիստական—ազգայնական կոիւնքից չափազանց տուժած գիւղացու տնտեսութիւնը չը ծանրաբեռնելու համար: Այս տուրքից ազատուում են միայն սակաւաոյժ տնտեսութիւնները:

Սահմանուող տուրքը պիտի լինի պրօգրեսիւ, համեմատական, որ պիտի հաւաքուի ինչպէս մի որոշ տոկոս կամ բաժին տնտեսութեան

ընդհանուր արդիւնքից: Չափը կորոշւի բերքի հաշւադրով և սպառող-
ներին թւի համեմատութեամբ:

Յորհնի, հիւսմ նիւթերի և ֆուրածի այն բոլոր պաշարը, որ
տուքը վճարելուց յետոյ մնում է հողագործի մօտ, զանաւում է լինի
ակաւտար արամադրութեան տակ և չի պիտի ենթարկւի ոչ ոքի կող-
մից բանադրաման:

Ստորև տալիս ենք, որդեգրւած համեմատական տուրքի ցուցակը:

Եթէ տնտեսութեան մէջ ցանուած վարե- լանօղի չափը մէկ շնչի համար հասնում է	Եթէ մէկ դետեատինի բերքը հաւասար է											
	25		25—35		35—45		45—55		55—65		65 և աւելին	
	Կը վերցւի											
	Փ.	Ֆ.	Փ.	Ֆ.	Փ.	Ֆ.	Փ.	Ֆ.	Փ.	Ֆ.	Փ.	Ֆ.
Մինչև 1/2 դես.	—	15	—	30	1	10	2	—	3	—	4	20
1/2 դես.—1 դ.	—	30	1	30	3	—	4	20	6	10	8	10
1 1/10 դ.—1 2/10 դ.	1	30	3	10	4	30	6	30	9	—	11	20
1 6/10 դ.—2 դ.	3	10	5	—	7	10	9	20	12	—	15	—
2 1/10 դ. և աւելի	5	—	7	20	9	30	12	20	15	30	18	—

Ըստ կօպերացիաներու մասին մշակւած օրինագծին, Հայաստա-
նի բոլոր կօպերատիւները միանում են մի կենտրոնական վարչութեան
Հայկօպի մէջ: Կենտրոնական միութեան կից հիմնում են հինգ բա-
ժիններ, արտադրողական, հայթայթիչ, տնտեսական, ֆինանսա-վար-
կային և կազմակերպչա - հրահանգչական: Կօպերացիաները
պիտի լինին ժողովրդական տնտեսութեան, պիզական և քաղաքային
արդիւնաբերութեան զարկ տուող ամուր և հիմնական օրգաններէն
մինչև կօպերացիաներու զարկ տալով աստիճանական բայց յամառ պայ-
քար պիտի մղւի օրէց օր աճող սպեկուլացիայի դէմ: Կօպերացիա-
ները հայթայթելու են նոյնպէս վալիւտային սպարանքներ և հում նիւթ
թէ անհատական և թէ արդիւնաբերական սպառման համար, կանոնա-
ւորելու են բաշխումը ինչպէս կենտրոնից—ձեւերը, նոյնպէս կօպե-
րատիւ խանութներէից—ժողովրդին, կատարելու են զբամատան դեր և
այլն: Կօպերատիւները պիտի լինեն նաև այն երկրորդ միջոցը, որով
կարելի պիտի լինի զիւրը մնացած պարենային աւելցուելը սպարան-
քային փութանակման ձևով ստանալ:

Չեմարկւած է կազմակերպելու կօպերացիայի գործը ամբողջ
Հայաստանում: Հրատարակւած օրինագծի համեմատ իւրաքանչիւր
քաղաքացի պարտաւոր է լինել սպառողական ընկերութիւններէից մէկուն
անդամ և իւրաքանչիւր շրջանում լինելու է միայն մէկ ընկերութիւն:

Կօպիրատիւրը և պօրնէ՛ ային տուրքը լինելու են այսպիսով Կոմունիստական կուսակցութեան տնտեսական ներքին քաղաքականութեան երկու հաստատուն հիմունք՝ ելլել, որո՛ց վրայ պիտի կառուցել մեր տնտեսական ապարատը և նրան է որ կը ներքին կուսակցութեան և կառավարութեան լուսազոյն ջանքերը:

3.

Առևտրական յարաբերութիւնները սկսած Պարսկաստանի հետ.

Պորճրգային Հայաստանի կառավարութեան նախաձեռնութեամբ սկսւած են առևտրական յարաբերութիւններ Պարսկաստանի հետ:

Մեր տնտեսական վերականգնման աշխատանքում, պարսիկ շուկայի հետ կապ պահելու խնդիրը մեր կարևոր ֆակտորներից մին պիտի լինի: Պարսկաստանի մէջ աիրող կրիզիսը, որ արդիւնք է պարսիկ վաճառականութեան Ռուսաստանի հետ միանգամայն կտրւած մընալուն և Անգլիական շահագործման, նպաստում է մեզ հացահատիկի և այլ հուզ նիւթերի գնման: Պորճրգային Հայաստանի կողմից գրկւած առևտրական պատիրակութիւնը, Պարսիկ կառավարութեան և Մակաւայ խանութեան կողմից գտած է բարեացակամ վերաբերմունք: Մինչև այժմ գնւած է 100,000 փութ արմտիք: Պարսկաստանի մէջ սուր կրիզիս է նաֆթի, և մագնէթի: Մենք ցորենի գնումների արժէքը փոխարինում ենք, մեծ մասամբ, Բագլից ստացւած նաֆթով և մագնէթով: Այսպիսով ցորենի գնումները չեն անդրադարձում մեր ֆինանսական դրութեան վրայ լայն չափով: Նկատւում է, որ պարսիկ վաճառականները անհատական նախաձեռնութեամբ՝ պիտի սկսին վաճառականական ուղղակի յարաբերութիւններ Հայաստանի հետ: Կազմակերպւած է Պարսկաստանից ձիեր և եղջիւրատը անասուններ գնելու գործը: Գնելիք անասունները պիտի օգտագործւին կաթնասնտեսութեան, ագարակների և մսի համար: Շահթախթ կայարանում, սկսւած է հին շինութիւնների նորոգման և նոր շինութիւնների կառուցման, սպանդանոցների և մսէ կոնսերվաների պատրաստման համար: Զուլֆ-Դարէժ գծի վերսկսումը աւելի ևս զարկ պիտի տայ երկու հարևան երկիրներու առևտրական յարաբերութեանց զարգացման:

4.

Յեկոմներու խորհրդածութիւնը.

Յունիս 17-ին երևանում կայացաւ Պորճրգային Հայաստանի գա-

ւառական յեղկոմների նախագահներու և ժողովրդական կոմիսարներու ներկայացուցիչներու խորհրդակցութիւնը, Սորհրդային Հայաստանի վարչական բաժանման և տեղական կառավարական մարմինների ստեղծման մասին:

Սորհրդային Հայաստանը բաժանեց 7 գաւառների—Երևանի, Էջմիածնի, Ալէքսանդրապոլի, Դիլիջանի, Լոււայ, Նոր-Քայազէտի, Դարալագեազի և 31 գաւառակների: Իւրաքանչիւր գիւղ, գաւառակ և գաւառ ունի իր նշանակովի յեղկոմը և իւրաքանչիւր գաւառային յեղկոմի կից կան բոլոր կոմիսարիատների գաւառական բաժանմունքները—ներկայացուցչութիւնները: Քննեցաւ կառավարական ապարատի ընտրովի անելու հարցը և որոշեց. աշնան ձեռնարկել գիւղերի խորհուրդների ընտրութեանը, որոնց ներկայացուցիչները կը կազմեն նոյն գաւառակի գործադիր մարմինը. իւրաքանչիւր գաւառակի գործադիր մարմինների ներկայացուցիչները կը կազմեն նոյն գաւառի գործադիր մարմինը, իսկ բոլոր գաւառների գործադիր մարմինների ներկայացուցիչները կը կազմեն Համահայկական Կենտրոնական Գործադիր Մարմինը: Համագումարը յանձնարարեց Ներքին Գործերու ժողովրդական Կոմիսարին մշակել ընտրութիւններու օրինադիւր և նոյնպէս սահմանել գիւղական, գաւառակային և գաւառային յեղկոմների ներքին փոխադարձ յարաբերութիւնները և այդ բոլորի կենտրոնական կառավարութեան հետ ունեցած փոխ-յարաբերութիւնը: Համագումարը տեղ երեք օր, համագումարին ներկայ էին 20 պատգամաւորներ գաւառներից: Նախագահում էր Ներքին Գործերի ժողովրդական Կոմիսար՝ ընկ. Պօլոս Մակինցեանը:

5.

Կովկասեան երեք հանրապետութիւնների կօնֆերենցիան.

Մօտ ապագայում կը բացւի Անդրկովկասեան երեք Հանրապետութիւնների կօնֆերենցիան՝ Երևանում: Այս կօնֆերենցիայով ստալին անգամս էլօր երեք հանրապետութիւնները կը հաւաքւին փոխադարձ համակրանքով ի, խաղաղօրէն լուծելու համար հարեանական խնդիրները: Այն ինչ որ վեց ամիս առաջ անլուծելի էր, այժմ գտնում է եղբայրական քննութեան առարկայ: Կօնֆերենցիայի բարոյական նշանակութիւնը դառնում է այսպէսով Անդրկովկասի աշխատաւորութեան աչքին ամենարարձը ու ամենազրական մի փաստ, յօգուտ Սորհրդային կարգերուն: Այս նշանակութիւնը՝ շատ աւելի խորանում է և դառնում աւելի արժէքաւոր հարց՝ աշխատաւորութեան համար: Ի՞նչ էր ներկայացնում Հայաստանը այսօր և երեկ: Երեկ Հայաստանը

դարձած էր մի «արեւտական կղզի», մի մեկուսացած երկիր, զուրկ հաղորդակցական միջոցներէ և տնտեսական կապակցութիւններէ այլ հարեան պետութիւնների հետ, շրջապատւած նրանց փոխադարձ թըշնամանքով, ամենօրեայ ազգամիջեան կոխերով և այլն: Իսկ այսօր իբր արդիւնք այդ սնփառունակ անցեալի, նա հիւժուած է, քաղցած, կիսամերկ և տնտեսական քայքայման վերջին առտիճանին հասած:

Կօնֆերանցիայի քննելիք առաջին հարցերից մին պիտի լինի հաստատել երեք հանրապետութիւնների տնտեսական միութեան հիմունքները: Տնտեսական միութիւնը Անդրկովկասում՝ երեք հանրապետութիւնների համար էլ անհատկապէս մըն է, միակ միջոցը քայքայած տնտեսութիւնը վերականգնելու համար, բաց առաւել ևս կենսական և «նհրաժեշտ է դառնում նա՛ հայաստանի աշխատւորութեան համար: Երկրորդ հարցը պիտի լինի հաստատել մի հիմնական դրամային սիստեմ Անդրկովկասում, վերացնելու համար այն բոլոր դրժւարութիւնները, որոնք առաջ են գալիս բազմազան դրամներու տարբերութիւնից և որմէ առաջին տուժողն է լինում բանւորն ու գիւղացին:

Երևանում կայանալիք երեք հանրապետութիւնների կօնֆերանցիան, տնտեսական խնդիրներից զատ պիտի նաև քաղաքական ամենակարևոր խնդիրները կարգադրի: Ասոնցմէ առաջինը սահմանազծային ներքին խնդիրներ են, երկրորդը Տաճկաստանի հետ կայանալիք կօնֆերանցիայի հարցը, որին պիտի ներկայանան Անդրկովկասի երեք հանրապետութիւնները միացեալ ճակատով: Ոչ մի կասկած կայ, որ Անդրկովկասի հանրապետութիւնների և Տաճկաստանի միջև կայանալիք կօնֆերանցիան՝ պիտի վերջանա զրականօրէն, քարեկամական և եղբայրական հիմունքներու աւելի ամրապնդմամբ: Տաճկաստանը, որ մինչև այժմ կղած էր անզիճող դէպի Հայաստանը, պիտի հաշւի առնէ այն պարագան, որ գործ ունի ոչ միայն Սորհրդային Հայաստանի, այլև բարեկամական և եղբայրական կապերով նրան կապւած Ազրբէջանի և Վրաստանի հետ: Տաճկաստանը պիտի հասկանայ, թէ ինչ նշանակութիւն ունենալու է իրան համար Անդրկովկասեան երեք երկրների բարեկամութիւնը և հարևանական աջակցութիւնը, որոնք օրէց օր ուժեղանում են և ամրանում Սորհրդային Ռուսաստանի շնորհիւ:



Տաճկահայ աշխատաւորութեան համադումարը Ալէքսանդրա-
պօլում.

Յունիսի 25-ին տեղի ունեցաւ Ալէք—պօլի շրջանի արեւմտահայերի առաջին անկուսակցական համագումարը, որին մասնակցում էին 95 պատգամաւորներ: Օրակարգն էր 1. Զեկուցում մօմենտի մասին, 2. Տաճկահայութիւնը և Սորհրդային Իշխանութիւնը, 3. Հայկական հարցը և Կոմունիստական կուսակցութիւնը, 4. Գաւառային Յեղկոմի զեկուցը իր անելիքների մասին; 5. Զեկուցումներ տեղերից: Համագումարը ողջունեց Կոմունիստական կուսակցութեան կենտրոնական կոմիտէի կողմից, ողջունի մէջ ասուում էր «Կենտրոնական Կոմիտէն համոզւած է, որ Կոմունիստական կուսակցութիւնը կը դառնայ զեկուսակարը թրքահայութեան, ազատագրելով նրանց երեսնամեայ արանախրիստների լծից, ի մի կը համախմբի նրան սոցիալիստական հայրենիքի անկախ սոցիալիստական Հայաստանի անհրաժեշտ կարիքների և շահերի իրականացման շուրջը»:

Համագումարը քէլարկեց մի ընդհանուր բանաձև, որի մէջ Ալէքսանդրապօլի շրջանի արեւմտահայ աշխատաւորութիւնը համոզւած է, որ 1. Տաճկահայ աշխատաւոր ժողովրդի մեծ պաշտպանն ու նրա հարցի արգարացի լուծողը Սորհրդային Ռուսաստանի յեզափոխական բանւորութիւնն է: 2. Փոքր ազգերի ազատագրումը և նրանց հարցի վերջնական լուծումը կիրականանայ միայն միջազգային սոցիալական յեզափոխութեան յաղթանակով: 3. Արևելեան ազգերի ըմբոստացումը և ազատագրական շարժումը օտարերկրեայ կապիտալիստների դէմ, զօրեղ հարւած է հասցնում զիշատիչ իմպերիալիստներին և այդպէսով նպաստում է միջազգային բանւորութեան վերջնական յաղթանակին: 4. Տաճկահայ աշխատաւորութիւնը ձեռք ձեռքի տւած իր սուսահայ եղբայրներին, ամեն կերպ աջակցելու է Ս. Հայաստանի զօրեղանալուն և ամբանալուն, Փարիզ է Սորհրդային Հայաստանի կառավարութեան, քանի որ այդ կառավարութիւնը ազատարար յեզափոխութեան մարմնացումն է ու իրագործողը Հայաստանում: 5. Ս. Հայաստանի դէմ գործող կուսակցութիւնները միանգամայն վնասակար և կործանիչ են Հայաստանի աշխատաւորութեան, առաջին հերթին տաճկահայ աբրինաքամ եղած ժողովրդի համար: 6. Իրա ամենացայտուն ապացոյցն է դաշնակցական վերջին հակաիդափոխական շարժումը և այդ կուսակցութեան վերջին մնացորդների Զանգեզուրում հաւաքւած բանդայի ոճրագործութիւնները, որ դաշնակցած պարսիկ խաների, քիւրդ ընդե-

րի, տաճիկ փաշաների և իմպերիալիստական տղրուկների հետ, կռիւ-
նն յայտարարում ընդդէմ հայ աշխատուոր ժողովրդի: 7. Տաճկահայու-
թիւնը յանձինն իւր աշխատուոր հատաճի վերջնականապէս կրես է
թեքել այդ կուսակցութիւնից՝ անողոք կռիւ յայտարարելով նրա դէմ,
զուրս շարեւելով իր միջից բոլոր պրովօկատորներին և մաուզերիստ-
ներին: Նա կուսան է հանդիսանալու Խորհրդային Հայաստանին ընդ-
դէմ արտաքին և ներքին հակաիդափոխութեան և քայքայւած տնտե-
սութեան վերաշինման մեծ գործին:

«Կէցցէ այն ուղին, որ տանելու է Հայաստանը և մասնաւորապէս
Տաճկահայաստանը դէպի կուլտուրական զարգացման երջանկութիւնը,
դէպի սոցիալիզմը»:

Համագումարը անցած է մեծ ոգևորութեամբ և զաւտում առաջ
բերած է ժողովրդական ամենամեծ խանդավառութիւն:

7.

Երևանի տաճկահայութիւնը կը բողոքի Զանգեզուրի արկածա- խնդիրներու դէմ.

Յունիս 30-ին Երևկոյեան, բանւորական տան դահլիճում, Զան-
գեզուրի նոր արկածախնդրութեան դէմ կայացաւ բազմամարդ միտինգ
մայրաքաղաքի արևմտահայութեան կողմից: Զեկուցից ընկ. Աբտաղէս
Կարինեանը Զանգեզուրում կատարւած խաղաղութեան բանակցու-
թիւնների մասին ընկ. Կարինեանը առանձնապէս կանգնեց այն իրո-
ղութեան վրայ, որ Գաշնակցութիւնը, փետրուարեան ապստամբու-
թեան իր հետ ունէր տաճկահայ անդիտակից մասսան, այժմ զուրկ է
տաճկահայերու օջակցութիւնից: Նա ասաց, որ «տաճկահայ աշխա-
տուոր ժողովուրդը բացարձակապէս անմասն է Զանգեզուրի արիւժոտ
աւանտիւրիայում, սա նշանակալից և պատմական մի փաստ է, որ
կատարեց տաճկահայ աշխատուորների մէջ»:

Ընկ. Կարինեանի ճանի մէջ արևմտահայերու համար անակնկալ
մը եղաւ Խարհրդային իշխանութեան այն մտադրութիւնը, որ միջա-
զեպի զանազան վայրերում նէհրումէրում, և Քիրման-
շահում ցրւած աւելի քան 15000 արևմտահայ գաղթականութիւնը
կառտփարութիւնը ցանկանում է գաղթեցնել Հայաստան ու հայթայ-
թել նրանց բնակարանի և ապրուստի միջոցներ: Միտինգում, արտա-
յայտեցին տաճկահայ աշխատուորութեան ներկայացուցիչ-
ներ: Միտինգում ներկաների կողմից ընդունեց հետեւեալ

քսնածեր :

«Երեանի տաճկահայ աշխատատուութիւնը լսելով ընկ. Արտաշէս Կարինեանի զեկուցումը Չանգեղուրի ասանտիրայի մասին, միանգամայն ճիշտ կը գտնէ այն փաստը, որ վերջին ասանտիրային ինքը մասնակից չէ և չի կարող լինել: Մենք կը յայտարարենք, որ այն օրէն, երբ լիկիղացիայի ենթարկեցաւ Դաշնակցութեան փեռը-ւարեան ապստամբութիւնը, այն օրէն՝ մեր բազմաշարժար գառը բաժանուց Դաշնակցութիւն կուսակցութիւնից: Միակ կուսակցութիւնը, որ ընդունակ է վարելու մեր գառը այդ Կամունիստական կուսակցութիւնն է, որ պիտի տայ մեզ խաղաղութիւն և ազատութիւն իմպերիալիստներին և անոնց լակէյ Դաշնակցութեան լծից, որ կրեուն տարի մեր զերիզմանափորը եղաւ և մեզ հայրենիքէն ու տնէն կտրեց:

«Յասուեմով լի, մեր զայրոյթը կը յայտնենք Չանգեղուրի վերաբերմամբ և կը գոչենք.

«Կեցցէ Տաճկահայ աշխատատուութեան միակ պաշտպան՝ Սորհրդային իշխանութիւնը:

«Կորչին մեր բաղդի ճեռ խաղացող դաշնակները:

«Կէցցէ Սորհրդային Չանգեղուրը և Ղարսը:

«Կէցցէ համայն հայ աշխատատուութեան սոցիալիստական հայրենիքը:

8.

Դաշնակցական արտաքին քաղաքականութիւնը փետրուարեան արկածախնդրութիւնից յետոյ.

Ստորև մէջ բերում ենք Սիմէան Վրացեանի նամակ—գիմումը Քեռզիմ Կարաբէքիր Փաշայի շտաբի Երևանեան ներկայացուցիչ՝ Կապիտան Բահաէզզինին:

Իրմումից երևում է, որ փետրուարեան ասանտիրայի, զեկավար՝ Պ. Վրացեանը յուսահատ իր գործի անյաջող ընթացքից պատեպատ է ընկած եղել ղեռ մարտի 18-ին և օգնութիւն է աղերսել Անգորայի կառավարութիւնից:

Այս պատմական փաստը, գուշու է մի աւելորդ անգամ ապացուցելու դաշնակցականներին ամբողջ կեղծաւորութիւնը և կուսակցական անհետողականութիւնը: Նայն այդ Վրացեանը իր և իր ընկերների քաղաքական գործունէութեան ամբողջ ընթացքում, մասնաւորապէս այն ժամանակ, երբ նա խմբադրում էր Երեանի «Յառաջ» թերթը-հաղարարութիւնը յօլաճանքով ամենավայրէջ շօվիի իզմն է քարոզել, շօվիիզմ, բրիթունաւոր սլաքները ուղղած են թո՛ւրքերի դէմ: Բայց անս

այո նամակի պարունակութիւնը:

«Թուրքիոյ ազգային Մեծ Ժողովի կառավարութեան՝ Արեւելեան ճակատի հրամանատարութեան ներկայացուցիչ՝ Բահէզդինին:

«Հաճեցէք ներկայ զիմումն շապ կերպով հասցնել Ձեր բարձր իշխանութեան և ինչպէս անձամբ բացատրել եմ Ձեզ, շտապեցնել, որ շուտափոյթ պատասխան ստացուի:

«Իր ազատութեան և անկախութեան համար մարտնչող Հայաստանի կուրը բոլշեիկները դէմ, մեր համոզումով՝ ծառայում է ոչ միայն Հայաստանին, այլ առաջաւոր Ասիայի բոլոր ազգերի օրոքն: Այդ պատճառով, Հայաստանը յոյս ունի, որ իր կուի ընթացքում ինքը կըստանայ օգնութիւն իր հարեաններից և առաջին հերթին տաճիկ ժողովրդից որի կենսական շահն էլ պահանջում է Հայաստանի յազմական դուրս գալը, այս կուից և անկախ մնալը:

«Այդ համոզումից ելնելով, Հայաստանի կառավարութիւնը իրնդրում է Թուրքիայի Ազգային Մեծ Ժողովի կառավարութեանը, յանուն երկու ազգերի փոխադարձ շահի, ըստ կարելոյն շուտ:

«1. Վերադարձնել Երևան՝ ռազմաճակատում գտնուող հայ զինուորական ռազմագերիներին:

«2. Տալ՝ որոշ պայմաններով հայ բանակին ռազմամթերք, տալին հերթին ուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մաուզերի փամփուշտներ և կամ Քոստի ու Լերեւի սիստեմի հրացաններ:

«3. Հազարգել մեզ, թէ արդեօք Ազգային Մեծ Ժողովի կառավարութիւնը, հնարաւոր է գտնում հասցնել Հայաստանին զինուորական օժանդակութիւն և եթէ կարող են, ի՞նչ չափով և եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում:

«Մոյն զիմումը անելով, Հայաստանի կառավարութիւնը հիմնուում է այն բարեկամական յարաբերութիւնների վրայ, որոնց հիմք է տրուած Ալեքսանդրապօլի դաշնագրից և որոնք խանգարել էին բոլշեիկները իշխանութեան ժամանակ»:

Խորին յարգանքօք—Հայաստանի կառավարութեան

Նախագահ՝ Սիմէոն Վրացեան:

Այս զիմումը պատահական երևոյթ չէ, այլ գրւել է Վրացեանի և կապիտան Բահէզդինի անձնական բացատրութիւնից յետոյ:

9.

Հայ և տաճիկ բարեկամական յարաբերութիւններ

Խորհրդային Հայաստանի և Անգորայի մեծ Ազգային Ժողովի

կառավարութեանց միջեւ պահուում է բարեկամական սերտ յարաբերութիւններ: Երևանում գտնուում է Աղզային մեծ ժողովի կառավարութեան ներկայացուցիչ՝ Լիւթֆի բէյը, որ պաշտօն ունի երկու հարևան պետութիւնների միջև գոյութիւն ունեցող բարեկամական յարաբերութիւնները աւելի ևս ընդլայնել և հաստատել երկու պետութեանց մայրաքաղաքներում գեապանութիւններ: Սպասուում է Տաճիկ կառավարութեան դեապանը: Խորհրդային Հայաստանի Կառավարութիւնը ևս կուզարկէ մօտիկ ապագայում իր լիազօր ներկայացուցիչը:

10.

Ուլթեր են Խորհրդային Հայաստանի ղեկավարները

Փողովրդական Կոմիսարների խորհրդի նախագահ և Ռազմական գործերի ժողովրդական Կոմիսար Ընկ. Ալէքսանդր Մեհա ս ն ի կ ե ն ն .

Ընկ. Ալէքսանդր Մեհասնիկեանը համառուօտական իրականութեան մէջ յայտնի դէմքերից մին է: Բնիկ Նոր-Նախիջևանցի: Արթուրեամբ իրաւաբան: Եղել է կոմունիստ Կուսակցութեան սկզբի օրերից—1904 թւից: Ընկ. Մեհասնիկեանը, Խորհրդային Ռուսաստանում յայտնի է որպէս զինուորական գործիչ և հերոս: Հրամանատար է եղել արևմտեան Ֆրօնտում: Իսկ արևելքում եղած է Կարմիր Գլարդիայի հրամանատար Զեխօ-սլովակների և Կոչչազի դէմ կուսելիս: Աշխատելով Խորհրդային Ռուսաստանում Ընկ. Մեհասնիկեանը, սչ մի բոլէ չի կորել իր կապը հայ աշխատաւորութեան հետ: Ունի գրական և մարքսիստական հեղինակութիւններ: Մեհասնիկեանը փորձած սովետական գործիչ է: Նախագահ է եղել Լիաով-բելառուսական Խորհրդային Հանրապետութեան Գործադիր Կոմիտէին: Վերջերս նա քարտուղարն էր Ռ. Կ. Կ. Մոսկուայի կազմակերպութեան, որի անդամների թիւը հասնում է 46 հազարի: Ա. Մեհասնիկեանը, հայ ժողովրդի հարազատ ծնունդն է: Այժմ վերադառնալով իր երկիրը իր հետ բերելով անագին փորձ և գիտութիւն թէ ինչպէ՞ս հարկաւոր է՝ երկիրը կառավարել, առանց անաբանց կռիւների, առանց շահագործման, Մեհասնիկեանը դառնում է հայ աշխատաւորութեան առաջնորդը:

2. Արտաքին Գործերի Փողովրդական Կոմիսար՝ Ընկ. Ա. Ս. քան ա գ Մ ո ս կ ե ն ն .—

Մեւած է 1886 թւին Գանձակում: Միջնակարգ կրթութիւնը՝ Գէորգիան ձեմարանում, բարձրագոյնը՝ Պետրոգրադի համալսարանի պատմագիտական ֆակուլտետում: Մեծամասնական է 1905 թւից: Այս թւից սկսեալ աշխատակցել է հայերէն և ուսուներէն լեզուներով բազմաթիւ կուսակցական թերթերու: Խմբագրած է մի շարք կուսակցա-

կան թերթեր Բաբուժ, Թիֆլիսում և Երևանում: Ունի մի գրական աշխատութիւն նւիրած «Երրորդ Ինտերնացիոնալի»: Կասեանի հետ միասին 1919 թւին ունեցած է անլեզալ գործունէութիւն Հայաստանում, առաջացնելով հոմոսեքսուալ կազմակերպութիւններ Հայաստանի դիվանուր վայրերու մէջ: 1921 յունւարին ձերբակալւած է և մարտին աքսորւած Հայաստանի սահմաններից դուրս:

Մուսեանը հարազատ ծնունդն է հայ ցեղին: Նա մշատեօրէն պահած է իր կազը հայ աշխատաւորութեան հետ: Որպէս Կովկասցի՝ Մուսեանը քաջ ծանօթ է Կովկասեան բարդ իրականութեան, իսկ որպէս հայ աշխատաւորութեան ծնունդը՝ լաւ գիտակ է ազգային ժողովրդական հոգեբանութեան և սնոր պահանջներուն:

3.—Ներքին Գործերի Ժողովրդական Կոմիտար՝ Ընկ Պ օ ղ ր ս Մ ա կ ի ն ց ե ա ն.—

Ծնւած է 1884 թւին Ներքին Աղուլիս գիւղում: Միջնակարգ կրթութիւնը ստացած է Մոսկուայի Լազարեան ճեմարանում, իսկ բարձրագոյնը, կրկին նոյն քաղաքի պատմա-իւլտարանական համալսարանում:

905—6 թւից, կանգնած է եղել մարքոսիտական աշխարհայեացքի վրա, որմէ ետք աշխատել է Սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան շարքերում: 917 թւին յեղափոխութեան առաջին օրից անցած է մոծամասնականների շարքը և աշխատած այնտեղ, մինչև իր Հայաստան գալը:

Մակինցեան, նոր Յեղիոմին մէջ վարում է Ներքին Գործերու Ժողովրդական Կոմիտարի պաշտօնը, մի գործ՝ որ արժանաւորապէս առաջ տարւում է: Պօղոս Մակինցեանով, Հայաստանի պետական պատասխանատու պաշտօններում աւելացած է մի նոր, արժէքաւոր ոյժ:

Մակինցեանը, ունեցած է նոյնպէս գրական գործունէութիւն: Քաջ ուսումնասիրած է հայ գրականութիւնը և ունի լոյս ընծայած մի շարք քննադատական յօդւածներ: Ունի նաև թարգմանութիւններ Շնիցլերից և Հաուպոմանից: Թարգմանած է նոյնպէս «Կոմունիստական Մանիֆեստը»:

Արդարադատութեան Ժողովրդական Կոմիտար՝ Ընկ. Ա ր տ ա շ է ս Կ ա ռ ի ն ե ա ն (Գարբիէլեան).—

Ծնւել է 1886-ին Դարբարում: Բազա Իրինազիոնը աւարտելոյց յետոյ մտել է Պետրոգրադի համալսարանը: Աւարտել է այդ համալսարանի իրաւաբանական ֆակուլտետը: Երգւեալ հաւատարմատարի պաշտօն ստանձնելով իրաւաբանական աշխատանք է վարել Բագի նաւթա-արդիւնաբերական ուսյօնում:

Յեղափոխական աշխատանք է վարում 1904-ից որպէս մեծամասնական: Աշխատակցել Սոց.-Իեմ. կրատական թերթերի 1904-ից մինչև 1914 թիւը. — «Կեանք», «Զայն», «Կայծ», «Նոր Ուղի»:

1914-ից «Պայքար», «Պոցիալ-դեմոկրատ», «Բանւորի խօսք», թերթերին և հանդէսներին: Միաժամանակ վարել է «Նոր խօսք», ամսագրի «Կոմունիստ», «Կարմիր դրօշակ» թերթերի պատասխանատու խմբագրի պաշտօնը:

1907-ից սկսած վարել է պատասխանատու աշխատանք բանւորական ուսումնարանում: 1914-ին Կովկասեան փոխարքայութեան որոշմամբ բանտարկւել է 5 տարով և աքսորւել Ռուսաստան: Փետրւարեան յեղափոխութիւնից յետոյ, հայ յեղափոխական կուսակցութիւնների կողմից լիազօրւել է և մասնակցել «հիմնադիր ժողովի» ընտրական օրէնքի մշակման համար հաստատուած յատուկ խորհրդաժողովի նիստերին: 1917-ի օգոստոսին վերադառնալով Բագու, ընտրւել է Ռուսաստանի Կոմունիստ. կուսակցութեան Բագուի Կոմիտէի անդամ: Հոկտեմբերեան յեղափոխութիւնից յետոյ Զարբատի բանւորական ուսումնարանում, վարել է Բագուի բանւոր, զինւոր, և գիւղացիական պատգամաօրնների խորհրդի և Գործադիր Կոմիտէի անդամի պաշտօնը: Միաժամանակ եղել է Բագուի կառավարութեան անդամ, Սահման Շահումեանի Նախագահութեամբ կազմւած Բագուի Սովյարկոմի մէջ: Վարել է Արգարազատութեան ժողովրդական Կոմիտարի պաշտօն:

Ունի մի շարք գրական աշխատանքներ, որոնց մէջ յայտնի է «Հայաստանի Ապագան» գրքոյկը, գրւած 1918 թւին, որը գիտականօրէն ապացուցանում է, որ Հայաստանի լուսաւոր ազագան հնարաւոր է միայն բանւոր-գիւղացիական միջազգային յեղափոխութեան յաղթանակով: Գրական միւս աշխատութիւններն են 1) «Քաղաքային Ինքնավարութիւն և Գեմօկրատիան» 2) «Կովկասեան պրօլետարիատի պատմութիւնից» I և II մասեր: 3) «Հին և Նոր Գեղարեւոտը» և այլն: Ունի նոյնպէս մի շարք քննադատական յօդւածներ Եւրօստիանի, Վարուժանի, Յակոբեանի և այլ հայ բանաստեղծների մասին:

5.—Արտաքին Ասետրի և Պարենաւորման ժողովրդական Կոմիտար՝ Ա ի է ք ս ա ն դ ր Բ է գ զ ա դ ե ա ն .—

Ծնւել է 1881 թ. Շուշիում: Նախնական կրթութիւնը ստացել է նոյն քաղաքի բէալական դպրոցում: Գպրոցը աւարտելէ ետք ուսումը շարունակել է Կիւնի պոլիտեխնիկում: Իբրև ուսանողական—յեղափոխական շարժումներին մասնակցող 4—5 անգամ բանտարկւել և վտարւել է դպրոցից: 907-ից սովորել է Յիւրիխի իրաւաբանական համալսարանում և 11-ին աւարտել է դօքտորութեան աստիճանով: Կոմունիստ է կուսակցութեան սկզբի օրերից, 1902 թւից: 906-ին ընտրւած է Բագուի բանւորութեան կողմից պատգամաւոր Սօսկւայի Սոց. Դեմո-

կրտական ընդհանուր ժողովին, որից յետոյ վտարւած է ուսական սահմաններից դուրս: Արտասահմանում իր ուսանողական շրջանին հետ ունեցած է նաև յեղափոխական ժրջան պորժուսէութիւն մինչև 915-ը: Բերած է իր լայն մասնակցութիւնը Զւիցիերիա ապաստանած հերոսացի և ուսւ յեղափոխական գործիչների գործունէութեան: Ալէքսանդր Բէզլազեանը տիպար յեղափոխական մըն է: Ունի լայն ընկերական և բարեկամական կապեր ուսական պարագլուխների և արտասահմանեան բոլոր աչքի ընկնող սոցիալիստների հետ:

Մասնակցած է իբրև ներկայացուցիչ Բաղիւի միջազգային կոնֆերանսին և Նէնայի Սոց. Դեմոկրատ կուսակցութեան համագումարին: Ունի հրատարակած մի գիտական աշխատութիւն «Քաղաքական պրոլետարիան և դրա իրաւարանական անալիզը» 911 թ. Կերմաներէն:

916-ին, վերադարձած է Ռուսաստան և տարած պարենաւորման պատասխանատու պաշտօններ: Հայաստանի սովետիզացիայէն հաք վարած է միաժամանակ Արտաքին գործերի և Պարենաւորման կոմիսարի պաշտօնները: Մոսկւայի կոնֆերանսին ընտրւած է լիազօր պատիրակ, որ պիտի ներկայացնէր հայկական տեսակէտը Ռուս-Տաճիկ—հայ—Աղբրէյջանեան միացեալ կոնֆերանսին մէջ, որ վիժեցաւ փետրւարեան յեղաշրջումով:

Փողովրդական Տնտեսութեան Խորհրդի նախագահ՝ Ս ա ր գ ի ս Ս ք ա պ ի ո ն հ ա ն -Մւււած է 1884-ին Դոն շրջանի Թոփթի դիւղում: Նախնական կրթութիւնը ստացած նոյն գիւղի վարժարանում, ապա Նախիջևանի Թեմական դպրոցում: Բագրի գիմնազիտներ աւարտած է 1906-ն Յետոյ հետեւած է Պետրոպոլի համալսարանին և 1910-ին շրջանաւարտ իրաւարանական հասարակական ֆակուլտետի: Քաղաքական յեղափոխական կեանքին հետեւած է տակաւին 1904 թ.ին: 905 թ.ից կանգնած է հղի մարքսիստական հոգի վրա և յարած Սոց. Դեմ. բուշևիկ թեկն: 1905 թ.ի յեղափոխութեան ակտիւ մասնակցութիւն ունեցած է Բագւա, Թիֆլիսի, Ռոստովի և Բաթումի շարժումներու մէջ: 1907—9 թ. ակտիւ քաղաքական աշխատանք է ունեցած Պետրոպոլի ուսանողական և բանուորական շրջաններում: 1909—1910 թ. հղի է արտասահման երկու անգամ ձերբակալելուց յետոյ: 1911—15 վարած է անլեզու կեանք յեղափոխական աշխատանքներում, ծառայելով գունազան հասարակական հիմնարկութիւններում:

1915-ին մտած է բանակ և ծառայած այնտեղ մինչև փետրւարեան յեղափոխութիւնը: Հոկտեմբերեան յեղափոխութեան բերած է իր գործօն մասնակցութիւնը: 1917 ի վերջերից տարած է քաղաքական, կուսակցական և Զինուորական պատասխանատու գործեր Դոնի, Յարիցիի, Վարժնէժի շրջաններում մինչև 1920 թ.ը: Եղած է

Կուսակցական շրջանային Կոմիտէի անդամ-քարտուղար, մասնակցած է Սորհրդային Նահանգային գործադիր կոմիտէներէ. բանւորական խորհուրդներէ նախագահութեան եւայն: Եղած է նոյնպէս անդամ Համառուսական Գործադիր Կոմիտէի: 1921 թ. ապրիլին եկած է Հայաստան ուր և տանում է Ժողովրդական Տնտեսութեան Սորհրդի Ղախագահի և Հայաստանի Կոմունիստական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի քարտուղարի պատասխանատու գործերը:

1904 թւից աշխատակցած է Ռուսերէն և հայերէն բազմաթիւ թերթերի:



ՀՀ Ազգային գրադարան



NL0835477

427

-50

473

478